

վորաբար այդ երեւոյթը հետեւանք է գրգռիչ երազներու կամ ծածկոյթներու չփումին:

Մեր նախահայրերը սննդական պահեցողութիւններու հետ, պահեցող էին նոյն չափով սեռական յարաբերութիւններու մէջ: Շարժուման մէկէ աւելի օրերուն մէջ, չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակ-նամտի երեկոնները ժուժկալ կը մնային: Եւ որքա՛ն աւելի ֆիզիքապէս զօրաւոր եւ աւելի երկարակեաց էին քան մենք, և կը վայելէին առոյգ ծերութեան մը ցանկալի շրջանը:

Մի՛ խորհիք թէ մտացածին անհիմն խրատներ կը հրամցնեմ ձեզ: Մտքէս չանցնիր բնաւ զձեզ հրաւիրել վանականի կեանքը ընդ-գրկելու. ո՛չ երբեք, եւ շատ անբնական կը գտնեմ կուսակրօն կեանքը, կը խորշիմ ծայրայեղութենէ, այլ կը մաղթեմ որ ճանչնաք ժուժկալութեան բարիքները, որպէսզի աւելի երկար առեն կարենաք վայելել ձեր սեռային բնազդը և մանաւանդ ձեր յառաջացած տարիքին մէջ անգամ ի վիճակի ըլլաք զայն իր բուն նպատակին ծառայեցնելու:

Կը կրկնեմ. ծննդագործելու բարձր նպատակէն դուրս մի՛ գոր-գոէք ձեր սեռական բնազդը, ժուժկալ և չափաւոր եղէք վայելելու մէջ անոր յարակից հեշտանքը:

Շամբինսի

ԲԺ. Բ. ՈՍԿԻ

ԶԵՐ ԳԼԽՈՒՆ ԶԱՐԸ

Այս խորագրին տակ մեր պաշտօնակիցը՝ «*Le Foyer*» իր վերջին Թիւերէն մէկուն մէջ խմբագրական մը նուիրած է Ֆրանսահայ գաղութին մէջ Թողախտի դէմ պայքարին: Ակնարկելէ ետք այդ մասին ՏԶԹ. Գրիգորեանի եւ քօլօլեանի պատրաստած մանրամասն ուսումնասիրութեան եւ նախագիծին, նիւթական անհրաժեշտ միջոցները ապահովելու համար կ'առաջարկէ «փոխադարձ օգնութեան սկզբունքով Ցամբայ ելլել», եւ Թողախտին դէմ տեսակ մը ապահովագրական ընկերութիւն կազմել:

Ուրախ ենք որ Թողախտի դէմ փոխադարձ օգնութեան ընկերակցութիւն մը կազմելու առաջարկը, զոր առաջին անգամ ըրած էինք երկու տարի առաջ «Բուժանք»ի մէջ (Թիւ 9), եւ կրկնած էինք վերոյիշեալ տեղեկագրին մէջ, այժմ արծագանգ կը գտնէ:

Դժբախտաբար այդ տեսակ առաջարկներն ու կոչերը դատաւ. պարտուած են ամուլ մ'նալու, որքան առեն որ խնդիրը գործնական գետնի վրայ չէ դրուած ու վստահելի անձերէ մարմին մը չէ կազմուած, որոշ հիմնադրամով:

Այս ուղղութեամբ պէտք է քանք Թափել: